ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «15» 09 2006թ. N 194-Ա

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքի 10 հոդվածի 4, 5 կետերով և 21 հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. «Գոլդեն Օրե» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել ՀՀ Կոտայքի մարզի Հանքավանի մոլիբդենի հանքավայրի հանքարդյունահանման հատուկ լիցենզիա՝ 25 տարի ժամկետով:
2. ՀՀ կոնցեսիոն գործակալության պետ՝ Կ. Հակոբյանին.
- 1-ին կետում նշված ընկերությանը ծանուցել հանքարդյունահանման լիցենզիայի տրամադրման և ծանուցումը ստանալու պահից 30-օրվա ընթացքում պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը ներկայացնելու՝ իր պարտականությունների մասին:
3. Սահմանել, որ
ա) սույն հրամանի 1-ին կետում նշված ընկերության հետ լիցենզային պայմանագրի կնքման վերջնաժամկետն է սույն հրամանի 2-րդ կետում նշված պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը ներկայացնելու պահից 9 ամիսը լրանալու օրը:
բ) սույն կետում սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին համապատասխան լիցենզային պայմանագիրը չկնքվելու, ինչպես նաև սույն հրամանի 2 րդ կետով սահմանված ժամկետում պետական տուրքը չվճարելու դեպքում՝ տրամադրված լիցենզիան ճանաչվում է՝ չեղյալ:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Կ. Ճշմարիտյան

682